ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք.Երևան 26.12.2016թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 120/16

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Մեծ Հիմք» Ա/Կ-ի 07.12.2016թ. ներկայացրած բողոքն (այսուհետ նաև՝ ԳԲԽ-120/16 բողոք) և կից փաստաթղթերը, «ԱՄԱՊՔ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը և ԳԲԽ-120/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 23.12.2016թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Մեծ Հիմք» Ա/Կ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումներն և պահանջը

«Մեծ Հիմք» Ա/Կ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 07.12.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը մասնակցել է ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԱՄԱՊՔ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով մրցույթին և հայտ է ներկայացրել: Սույն թվականի նոյեմբերի 25-ին կայացել է մրցույթի հայտերի բացման նիստը:

Ընկերության կողմից ներկայացված հայտը մերժվել է հետևյալ պատճառաբանությամբ.

1. վճարման պահանջագրում բացակայում է գլխավոր հաշվապահի ստորագրությունը;
2. տուժանքի մասին համաձայնության մեջ՝ «տնօրենի անձնագրային տվյալները» դաշտում, լրացված է նաև տնօրենի գրանցման հասցեն;
3. գնի առաջարկում նշված է ամիս/ ամսաթիվ:

Ընկերությունը ներկայացված բողոքով հայտնել է նաև, որ սույն Ընթացակարգով Պատվիրատուն մտադիր է պայմանագիր կնքել *4 721 000 ՀՀ դրամով*, այնինչ «Մեծ Հիմք» Ա/Կ-ի գնի առաջարկը կազմում է *3 300 000 ՀՀ դրամ*:

Ընկերությունը գտնում է, որ հայտի մերժումն անհիմն է հետևյալ պատճառներով.

1.«Մեծ Հիմք» Ա/Կ-ի հաշվապահը բանկային փաստաթղթեր ստորագրելու լիազորություն չունի և այդ պահանջագիրը ստորագրելու դեպքում բանկի կողմից կհամարվեր կեղծ փաստաթուղթ և չէր կատարվի;

2. հայտի մերժման հիմքում ընկած 2-րդ և 3-րդ հիմնավորումներն անհեթեթություն են և ենթակա չեն մեկնաբանման:

Ընկերությունը, բողոքում մեջբերելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետը, այն է՝ «*հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով, բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են*», գտնում է, որ իր կողմից ներկայացված հայտը բավարարում է պահանջված բոլոր նվազագույն պայմաններին:

Ընկերությունը, հղում կատարելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի դրույթներին, խնդրել է.

1. կիրառել միջանկյալ ընթացակարգ՝ կասեցնելով պայմանագրի կնքման գործընթացը, քանի որ ստեղծված պայմաններում պայմանագրի կնքումը Ընկերության գործարար շահերին կարող է վնաս հասցնել;

2. դադարեցնել ԱՄԱՊՔ-ՊԸԱՇՁԲ-16/1 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2016թ. թիվ 2 արձանագրությամբ կայացրած որոշումը՝ «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 13.12.2016թ. ժամը 16:20-ին՝ ԳԲԽ-120/16 բողոքը քննող հանձնաժողովի առաջին նիստին տեղի ունեցած քննարկման ժամանակ, «Մեծ Հիմք» Ա/Կ-ի նախագահն ամբողջությամբ պնդել է բողոքով ներկայացրած դիրքորոշումը:

2. «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումներն և դիրքորոշումը

«Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է, որ ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից հայտարարված «ԱՄԱՊՔ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի բացման նիստում «Մեծ Հիմք» Ա/Կ-ի ներկայացված հայտը մերժվել է գնահատող հանձնաժողովի 25.11.2016թ. թիվ 2 որոշմամբ:

Մերժման հիմք է հանդիսացել ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 10-րդ կետի, ՀՀ ֆինանսների նախարարության 25.07.2014թ. թիվ 06/73-1/10432 գրության և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համաձայն: Մասնավորապես՝ տուժանքի մասին համաձայնագրում առկա են մի շարք անհամապատասխանություններ:

3. ԳԲԽ-120/16 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 23.12.2016թ. եզրակացությունն և առաջարկել է «Մեծ Հիմք» Ա/Կ-ի 07.12.2016թ. ներկայացրած բողոքը բավարարել:

4. ԳԲԽ-120/16 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-120/16 ծածկագրով բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի պատուհանների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպվել է «ԱՄԱՊՔ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգ (այսուհետև նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Մեծ Հիմք» Ա/Կ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև նաև՝ Գնահատող հանձնաժողով) կողմից 25.11.2016թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտը հետևյալ հիմնավորմամբ.

ա) «Մեծ Հիմք» Ա/Կ-ի կողմից ներկայացված վճարման պահանջագրում բացակայում է գլխավոր հաշվապահի ստորագրությունն, որն, ըստ ՀՀ ֆինանսների նախարարության 25.07.2014թ. թիվ 06/73-1/10432 գրությամբ ներկայացված պարզաբանման, ենթակա է մերժման:

բ) Տուժանքի մասին համաձայնության մեջ հրավերով պահանջվող /Ընկերության տնօրենի անուն, ազգանունը և անձնագրային տվյալները/ տողում ներկայացված է նաև բնակության վայրը և հասցեն, որը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

գ) Գնի առաջարկում նշված է ամիս/ ամսաթիվ:

3. ՀՀ ֆինանսների նախարարության 25.07.2014թ. թիվ 06/73-1/10432 գրության համաձայն՝ եթե մասնակցի կողմից ***հայտի ապահովման՝ տուժանքի համաձայնության***

մեջ բացակայում է համապատասխան անձանց ստորագրությունները և մասնակցի կնիքը, ապա հայտն օրենքով սահմանված կարգով ենթակա է մերժման:

5. Խորհրդի հիմնավորումներն և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով «Մեծ Հիմք» Ա/Կ-ի կողմից 07.12.2016թ. ներկայացված բողոքն և կից փաստաթղթերը, ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի ներկայացված բողոքի վերաբերյալ գրավոր կարծիքը, ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի պատուհանների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ԱՄԱՊՔ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերն (այսուհետ նաև՝ Հրավեր), «Գնումների մասին» ՀՀ օրենքն (այսուհետև նաև՝ Օրենք), ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգն (այսուհետ նաև՝ Կարգ), հայտնում է հետևյալը.

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները:

«Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ հաշվապահական հաշվառման փաստաթղթերն ստորագրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է կազմակերպության ղեկավարը, ընդ որում, կարող է սահմանվել ստորագրության իրավունքի պաշտոնակարգություն՝ կախված տվյալ անձի զբաղեցրած պաշտոնից, գործառնության ոլորտից, էությունից և դրամական արժեքի մեծությունից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է, որ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի կողմից հաստատված հայտի ապահովումը:

Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտով՝ հրավերով սահմանված կարգով ներկայացնում է հայտի ապահովում և որոշում է հայտի ապահովման չափը, որը չի կարող պակաս լինել հայտով առաջարկվով գնի երկու

տոկոսից: Հայտի ապահովումը ներկայացվում է մասնակցի կողմից միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Մասնակցի կողմից հայտի ապահովումը ներկայացվում է ՀՀ ֆինանսների նախարարի 02.08.2013թ. N667-Ն հրամանով հաստատված հրավերների օրինակելի ձևերի 9-րդ հավելվածով նախատեսված՝ տուժանքի մասին համաձայնության (և դրան կից՝ վճարման պահանջագրի) ձևով:

Տուժանքի մասին համաձայնությանը կից ներկայացվող վճարման պահանջագիրը լրացվում է հիշյալ օրինակելի ձևերի «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանները և լրացման կարգի» համապատասխան:

ՀՀ ֆինանսների նախարարության 25.07.2014թ. թիվ 06/73-1/10432 գրության համաձայն՝ եթե մասնակցի կողմից ***հայտի ապահովման՝ տուժանքի համաձայնության*** մեջ բացակայում է համապատասխան անձանց ստորագրությունները և մասնակցի կնիքը, ապա հայտն օրենքով սահմանված կարգով ենթակա է մերժման:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 25.11.2016թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ հանձնաժողովը մերժել է «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտը հետևյալ հիմնավորմամբ՝ «Մեծ Հիմք» Ա/Կ-ի կողմից ներկայացված ***վճարման պահանջագրում*** բացակայում է գլխավոր հաշվապահի ստորագրությունն, որն ըստ *ՀՀ ֆինանսների նախարարության 25.07.2014թ. թիվ 06/73-1/10432 գրությամբ ներկայացված պարզաբանման՝ ենթակա է մերժման*; տուժանքի մասին համաձայնության մեջ հրավերով պահանջվող /Ընկերության տնօրենի անուն, ազգանունը և անձնագրային տվյալները/ տողում ներկայացված է նաև բնակության վայրը և հասցեն, որը չի համապատասխանում հրավերի պահանջներին; գնի առաջարկում նշված է ամիս/ամսաթիվ:

Խորհուրդը, հայտնում է, որ ՀՀ ֆինանսների նախարարության 25.07.2014թ. թիվ 06/73-1/10432 գրությամբ ներկայացված պարզաբանումը վերաբերվում է տուժանքի

մասին համաձայնությանը և այդ փաստաթղթում գլխավոր հաշվապահի ստորագրության բացակայությանը, մինչդեռ Պատվիրատուի կողմից տուժանքի մասին համաձայնությունը նույնականացվել է վճարման պահանջագրի հետ և նշված գրությամբ տրված պարզաբանումը տարածվել նաև վճարման պահանջագրի վրա:

Բացի այդ, ինչպես արդեն նշվել է, «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի համաձայն՝ հաշվապահական հաշվառման փաստաթղթերն ստորագրելու իրավունք ունեցող անձանց շրջանակը որոշում է կազմակերպության ղեկավարը, ընդ որում, կարող է սահմանվել ստորագրության իրավունքի պաշտոնակարգություն՝ կախված տվյալ անձի զբաղեցրած պաշտոնից, գործառնության ոլորտից, էությունից և դրամական արժեքի մեծությունից:

Միևնույն ժամանակ Ընկերությունը 07.12.2016թ. ներկայացված բողոքով հայտնել է, որ «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հաշվապահը բանկային փաստաթղթեր ստորագրելու լիազորություն չունի և այդ պահանջագիրը հաշվապահի կողմից ստորագրվելու դեպքում, բանկի կողմից կհամարվեր կեղծ փաստաթուղթ և չէր կատարվի:

Ինչ վերաբերում է տուժանքի մասին համաձայնության մեջ Ընկերության տնօրենի բնակության վայրը և հասցեն, իսկ գնի առաջարկում ամիս/ամսաթիվ նշելուն, ապա Խորհուրդը գտնում է, որ նշվածը չեր կարող հիմք հանդիսանալ Ընկերության հայտի մերժման համար:

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ նման հիմնավորմամբ «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտը ենթակա չէր մերժման, ուստի առաջարկում ենք «Մեծ Հիմք» Ա/Կ-ի կողմից 07.12.2016թ. ներկայացված բողոքը բավարարել՝ դադարեցնել ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-Ի կարիքների համար «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքի պատուհանների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱՄԱՊՔ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.11.2016թ. ժամը 11:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության 4.1 կետով «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Ելնելով վերոգրյալից և զեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն՝

Ո Ր Ո Շ Ե Ց

«ԱՄԱՊՔ-ՊԸԱՇՁԲ-16/1» ծածկագրով գնման պարզեցված ընթացակարգով «Մեծ Հիմք» Ա/Կ-ի հայտը մերժելու վերաբերյալ Գնահատող հանձնաժողովի 25.11.2016թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշումը դադարեցնելու պահանջով Ընկերության կողմից 07.12.2016թ. ներկայացված բողոքը բավարարել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

անդամ՝ Սյունե Բադալյան

անդամ՝ Տաթևիկ Զոհրաբյան